



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

631.5

ՀԱՅԲԱՄԲԱԿԿՈՍ

4-21

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ԲԱՄԲԱԿԻ ԲԵՐՔԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

□ □ □

631.5
4-21 սծ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կապիտալիստական յերկրներից բամբակի անկախություն ձեռք բերելու խնդիր է դրել խորհրդային Միությունը և այդ ասպարիզում ունի հսկայական հաջողություններ: 1928 թվից մինչև 1931 թիվը բամբակի արտադրանքը 15 միլիոն փթից հասել է մինչև 24,5 միլիոն փթի: 1932 թ. դարնանացանի կամպանիային 200 հազար հեկտ. ավելի յե ցանված նախորդ տարվա համեմատությամբ, ըստ վորում բամբակի ցանքսն ավելի վաղ և վերջացել, քան անցյալ տարի, վորն ապահովում է բերքատվության բարձրացումը առաջիկա բերքահավաքին, պայմանով, յեթե պայքար մղվի մոլախոտերի և բերքահավաքին տեղի ունեցող կորուստների դեմ:

1008
34430

ԽՍՀՄ-ի և Համկոմկուսի (բ) Կենտկոմի 1932 թ. հուլիսի 5-ի վորոշումը «1932 թ. բերքահավաքի մասին» մատնանշում է, վոր «առաջիկա բերքահավաքի կամպանիայի ժամանակ անհրաժեշտ է կենտրոնացնել ուժերը՝ վերացնելու նախկին տարիների բերքահավաքի կամպանիաների հիմնական թերությունները»: Ժողկոմխորհը և Կենտկոմն առանձին ուշադրություն են դարձնում հացահատիկների բերքահավաքի հետ մեկտեղ շաքարի ճակնդեղի,

Սրբագրեց՝ Գողոս Մկրտչյան

Գեահրատի տպարան.

Գլավխա № 8918 (բ). Գաավեր № 2986. Հր. Մ 2. Տիրամ 700

Հանձնված է արտադրության, 19 սեպտեմբերի 1932 թ.

Ստորագրված է տպագրելու 28 սեպտ. 1932 թ.

բամբակի, արևածաղկի, ծխախոտի, կարտոֆիլի, վուշի, կանեփի բերքահավաքի վրա և պահանջում են թույլ չտալ, վոր կրկնվեն անցյալ տարվա սխալները, վորոնք տեղի յեն ունեցել շաքարի ճակնդեղի հանելու և փոխադրելու ասպարիզում:

Ամենակարևոր խնդիրները, վորոնց լուծման վրա պիտի կենտրոնացնեն իրենց ուշադրությունը խորհրդային և կուսակցական կազմակերպությունները, Ժողկոմխորհը և Կենտկոմը համարում են հետևյալները.—

Բերքահավաքի աշխատանքների անկյունաքարն է հանդիսանալու կորուստների դեմ մղելիք պայքարը:

Կորուստների դեմ պայքարելու վճռական միջոց է հանդիսանում բերքահավաքը կատարել ամենակարճ ժամանակամիջոցում, ողտազործելով փոչ միայն բարդ, այլև ամենապարզ մեքենաներն և գործիքները:

Մոտ 2,400.000 հեկտ. բամբակի բերքը հաջողությամբ հավաքելու և ամենաչնչին կորուստներով բամբակի բարձրորակ հումք ստանալու համար անհրաժեշտ է կորուստների դեմ մղելիք պայքարին նպաստող միջոցառումները հասցնել յուրաքանչյուր բրիգադայի, յուրաքանչյուր բանվորի և կոլտնտեսականի: Բերքահավաքի բանավանները, բամբակի կորուստների դեմ մղվող պայքարի կանոնները պիտի քննության առնվեն արտադրական խորհրդակցություններում և սխտեմատիկ վերամշակվեն ինչպես բերքահավաքի նախա-

պատրաստական շրջանում, նույնպես և բամբակի բերքահավաքի անմիջական ընթացքում:

Յուրաքանչյուր բրիգադայում բրիգադիւրի պատասխանատւությամբ պիտի կազմակերպվի ագրոտեխնիկական ժամ, վորպես գործնական պարապմունք՝ արտադրական առաջադրանքները լավագույն ձևով կատարելու և բերքահավաքի ընթացքում յերևան յեկած թերությունները վերացնելու համար:

Սույն կանոնները կարող են ծառայել վորպես ոժտանդակ նյութ ագրոտեխնիկական ժամի պարապմունքների համար:

Ձեռք բերել բերքի լիակատար իրացում, այդ նշանակում է ապահովել մեր թեթև արդյունաբերությունը հումքով և բարձրացնել բանվորների և կոլտնտեսական մասսաների բարեկեցությունը:

Բամբակի կորուստը, առանձին վերցրած, թվում է միանգամայն աննշան ու անկարևոր, սակայն, յեթե յուրաքանչյուր կոլտնտեսական ու բանվոր մտածի այն մասին, թե ինչ կդառնան իրենց միջոցով կորստից փրկած հումքի կիրառմաները, յեթե այն բազմապատկվի ավելի քան մեկ և կես միլիոն բամբակի բերքահավաքով զբաղվող տնտեսությունների թվով, կհասկանա, վոր այդ կիրառմաներով նա պետությանը տալիս է տասնյակ ու հարյուր հազարավոր տոնն ամենաթանկարժեք արտադրանքը, վորը բարձրացնում է յուր տնտեսության յեկամտաբերությունը, մեծացնում է մանուֆակտուրայի արտադրանքը և այդպիսով բարելավում է թե՛ իրեն և թե՛ քա-

վաքի պրոլետարիատին անհրաժեշտ կտորն-
դենի, դործվածքների ու պատրաստի զգեստի
մատակարարումը:

Պայքարը կորուստների դեմ, դա կոլտըն-
տեսական և չքավոր ու միջակ ամենալայն
մասսաների, գնման կայանների ու գործարան-
ների բանվորների գործ է: Միայն նրանց ոգ-
նությամբ կարելի յե ամբողջովին վերացնել
բամբակի բերքահավաքին տեղի ունեցած ա-
մեն տեսակի կորուստները և հենց դրանով
ձեռք բերել տեքստիլ արդյունաբերության
բարելավումը, պրոլետարական պետության
համար տնտեսել միլիոնավոր ուրբյիններ,
բարձրացնել իր տնտեսության յեկամտարե-
րությունը և արագացնել Միության բամբա-
կի լիակատար անկախության նվաճումը:

Անցյալ տարվա փորձը ցույց տվեց, վոր
բամբակի կորուստը խոշոր չափերի յե հաս-
նում շնորհիվ բամբակահավաք գործիքներին
անշնորհք վերաբերվելուն, աչխատանքի ան-
կանոն կազմակերպման, դաշտում բամբակին
անփուլթ վերաբերվելուն, գնման կայաններն
ու գործարանները տեղափոխելիս, նաև պա-
հելու ժամանակ և գործարանում՝ հումքը կա-
մերաները տանելիս:

Պայքարը բամբակի կորուստների դեմ
բարդ խնդիր չէ: Հարկավոր է միայն վողջ
բերքահավաքի և մթերման կամպանիաներն
անց կացնել վորպես մասսայական քաղաքա-
կան-տնտեսական կամպանիա, բանվորների և
կոլտնտեսականների ուղադրությունը կենտրո-

նացնել այն միջոցառումների վրա, վորոնք
նվազեցնում են կորուստները:

ԽՍՀՄ-ի Հողօրդկոմատը և Լենինի ան-
վան Գյուղատնտեսական Գիտությունների Ա-
կադեմիան տպագրելով ներկա կանոնները դի-
մում են բոլոր բամբակացան խորհատեսու-
թյուններին և կոլտնտեսություններին խնդրելով՝
քննել այդ կանոնները բրիգադաներում, վոր-
պեսզի նրանք ավելի լավ ու զիտակցական կեր-
պով կիրառվեն բրիգադայի պրակտիկայում:

Բոլոր լրացումների մասին, վորպիսիք
յուրաքանչյուր բրիգադա կարևոր կհամարի ա-
նել կանոնների մեջ յեղած առաջարկություն-
ների նկատմամբ պիտի գրել հետևյալ հասցե-
յով՝ Москва, ул. Коминтерна, 9, Техпрот НКЗ
— СССР.

Անհրաժեշտ է, վոր մենք լավագույն
խորհատեսությունների և կոլտնտեսություն-
ների բամբակի բերքի կորուստների դեմ կիրա-
ռած միջոցառումների փորձն ի մի գումարենք.
վորպեսզի ուսումնասիրենք այն և տանք Միու-
թյան բոլոր բամբակացան խորհատեսու-
թյուններին ու կոլտնտեսություններին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՁԱԿԱՆ ՁԵՌՆԱՐ-
ԿՈՒՄՆԵՐ ԲԱՄԲԱԿԻ ԲԵՐՔԻ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ
ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ՝ ՄԻՆՁ ԲԵՐՔԱ-
ՀԱՎԱՔԸ .

Կորուստների դեմ պայքարը պիտի սկսվի մինչ բամբակի բերքի հավաքը:

Առաջին ետապը պիտի հանդիսանա բամբակի բերքահավաքի պլանի կազմելը, վորը պիտի մանրամասն մշակվի կոլտնտեսութունների ընդհանուր ժողովներում, ուր պիտի նշվեն՝ բերքատվությունը, ցանքսի ժամկետները, մշակման վորակը, հասունանալու ընթացքը, և այս ամենը խտորեն համաձայնեցվի այն մյուս աշխատանքների պլանների հետ, վորոնք կատարվելու յեն կոլտնտեսություններում՝ բերքահավաքի ժամանակաչրջանում, պիտի կապակցվի մանավանդ աշխատանքների պլանների հետ: Բանպլանը պիտի հասցնել մինչև բրիգադան:

Համաձայն յենթապրվող բերքի՝ հարկավոր է վորոշել յուրաքանչյուր կոլտնտեսության բանուժի պահանջը, նրա դասավորումը և արտադրանքի նորման: Միաժամանակ պիտի սահմանվի տրանսպորտի, պարկերի, բրեզենտների, կշիռների պահանջը:

Բավարար քանակով հավաքարարների՝ ժամանակին հասած բամբակը հավաքելուն դուրս գալը պարհուրում է հասած բամբակը

գետին թափվելուց ու կորուստից: Թափված բամբակը մեծ մասով, կոխկոտում են հավաքարարները կամ քշում և քամին:

Մինչև բամբակի հավաքն անհրաժեշտ է կազմակերպել բամբակի ցանքերի պաշտպանությունն անասունների կոխ տալուց և հափը տակությունից: Բամբակը գողանում են անդիտակից բամբակացաններն ու կողմհակի մարդիկ՝ իրենց անձնական կարիքների համար, կամ վաճառելու՝ տեղական շուկաներում սպեկուլյատիվ գներով. վաճառքի յեն հանում բամբակի թելը, նմանապես տներում պատրաստած գործվածքները (մանվածք, թոկ և այլն):

Բամբակի անխնամ պահպանության հետևանքով հումի փչանալու, հումքի անվթարությունն ու բարձր վորակը ապահովելու և կորուստների առաջն առնելու համար կոլտնտեսություններում վաղորդ պիտի պատրաստել չոր և մաքուր շենքեր:

Վորպես կազմակերպչական ամենակարեվոր ձեռնարկում կոլտնտեսականների և մեխատնտես չքավոր-միջակային բամբակացան տնտեսությունների մեջ պիտի լայն բացատրական կամպանիա տարվի կորուստների դեմ ամենավճուղական պայքար մղելու անհրաժեշտության մասին, նշելով՝ վոր այդ արվելու յե վոչ միայն պրոլետարական պետությանը ծայր աստիճանի անհրաժեշտ նյութ տալու նպատակով, այլ նաև իրենց տնտեսությունն զգալիորեն բարձրացնելու համար:

ՊԱՅՔԱՐ ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻՑ
ՅԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՌԱՋԱՅՈՂ
ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԴԵՄ.

Բամբակի բերքի կորուստների դեմ մղվող պայքարում առանձին ուշադրութուն պիտի նվիրվի բույսը վնասատուներից և հիմնանդություններից պաշտպանելու գործին:

Այդ առնչությամբ աշխատանքները պիտի տարվեն ինչպես նախազգուշական ազդրոնոմիական միջոցառումների, նույնպես և այդ վնասատուների վոչնմացման գծով:

Վնասատուների քանակը պակասացնելու և ուժեղ, առողջ բույս ունենալու համար, վոր կարողանան ղիմադրել հիվանդություններին և վնասվածներին, վորպես ամենակարևոր նախազգուշական միջոցներ հանդիսանում են հետևյալները.—

1. Մոլախոտերի վնասատուների ոջախի մաքրում.

2. Ցանքերի ժամանակին ու կանոնավոր մշակություն.

3. Առանձին ուշադրութուն նոսրացմանը բամբակի լվիճով հիվանդացած ծիլերին. այդպիսի ծիլերն անհրաժեշտ է հեռացնել—թաղելով հողի տակ, կամ ավելի լավ է՝ այրել, վորպեսզի վնասատուն առողջ ծիլերին չլնասի:

4. Բամբակը հավաքելիս պետք է առողջ հումքը զատել, վորևէ հիվանդությունով վարակվածից:

5. Բամբակի հավաքը վերջացնելուց հետո անհրաժեշտաբար պիտի հեռացնել բամբակի ծալքերի մեջ մնացած բուսական մնացորդներից, զանազան տեսակի անմաքրությունները և այլն. նմանապես պիտի հերկել հողը, վորի շնորհիվ վոչնչացվում են վնասատվի համար ճմեռելու նպաստավոր պայմանները:

Իսկ այս կամ այն վնասատվի յերևան գալու դեպքում անհրաժեշտ է գործադրել նրանց վոչնչացնելու միջոցներ.—թունավոր գրավիչներ (примака) կանաչ ոճառի լուծույթի սրբակում, ծծմբի փոշոտում, մկնդեղաթթվային կալցիի սրակում և այլն:

Վնասատուների դեմ մղվող պայքարին վերաբերող բոլոր տեսակի հարցերով պիտի ղիմել մոտակա, մեքենական վոչնչացման, շրջանային կամ միջշրջանային կայանները:

ՊԱՅՔԱՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԴԵՄ ԲԱՄԲԱԿԻ
ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ.

Բամբակի բերքի գլխավոր կորուստներից մեկը հանդիսանում է բերքահավաքի հետ կապված կորուստը:

Բամբակին ամբողջությամբ և միաժամանակ չի հասունանում, ուստի նրա հավաքը պիտի կատարվի մի քանի անգամ:

Անցյալ տարվանից արդեն բամբակի բերքահավաքի համար գործադրվում են հատուկ բամբակահավաք պնեմատիկ տորմավակում և սլեդինձ (սահնակ) մեքենաները:

Բերքահավաքի բոլոր նվազներին ու բոլոր յեղանակների դեպքում առաջին հիմնական կանոնն է՝ բավարար քանակով հավաքարարների յուր ժամանակին դաշտ դուրս գալը:

Հումքի հավաքը ժամանակին կատարելն անհրաժեշտ է նրա համար, վորովհետև բամբակի վոչ բոլոր տեսակներն են բավարար չափով դիմանում ուժեղ ցրտերին, հետևապես միանգամայն հասուն բամբակի մի մասը քամուց (առանձնապես նոր շրջաններում և Ուկրաինայում) կամ անձրևից գետին են թափվում և զգալի մասով վոչնչանում. քամին և քչում, հավաքարարներն են կոխոտում և կամ լավագույն դեպքում՝ մնում է վորպես կեղտոտված, անմաքուր, ցած վորակի բամբակ:

Մինչ ցրտերը կատարվող բերքահավաքի ժամանակ պիտի հավաքել միանգամայն հասուն, բացված կնդուղները, թույլ չտալով միաժամանակ հավաքել չհասած բամբակը, վորը դրում է մինչ ցրտերը հավաքած ամբողջ բամբակի պարտիայի վորտեր:

Բերքահավաքի ժամանակ անպի ունեցող տարեր կարգի կորուստները չթույլատրելու նպատակով անհրաժեշտ է հետևյալ միջոցների կիրառումը:

ՁԵՌՒՔՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԲԵՐՔԱՀԱՎԱԿԻ ԺԱՄԱՆԱԿ.

1. Բամբակի բերքահավաքի կամ պոնիայի ամբողջ բնթացքում՝ դիմադրկությունը վերացնելու համար, բրիզադայի կողմը պիտի լինի մշտական:

Յուրաքանչյուր բրիզադայի պիտի տրվի առանձին հողամաս և յուրաքանչյուր հավաքարարին՝ առանձին մարզեր: Միայն բանվորական ուժի նման դասավորության դեպքում, կարելի կլինի հետևել ամեն մի բրիզադայի, ամեն մի հավաքարարի աշխատանքի վորակին ու ժամանակին միջոցներ ձեռք առնել դեպ աշխատանքն ունեցած անճշտապահության և անուշադրության դեմ:

2. Անհրաժեշտ է բերքը հավաքել գոգնոցների մեջ, վորն զգալի չափով արագացնում է հումքի հավաքումը և համարյա ամբողջովին վերացնում է բամբակի վայր թափվելը:

3. Կրճատելու համար այն տարածությունը, վոր հավաքարարն անցնում է յուր ժողոված բամբակը պարկի մեջ լեցնելու, անհրաժեշտ է վերջինները դնել այնպիսի տեղերում և այն հաշվով, վոր հավաքարարը հավաքման բոլոր կետերից անցնի նվազագույն տարածություն:

4. Դաշտերում պիտի դրված լինեն արկղներ կամ հատուկ պարկեր, վորպեսզի գետնից հավաքած բամբակը, կնդուղներից հավաքածից առանձին, լեցվեն նրանց մեջ: Նպատակահարմար է գետին թափված բամբակի հավաքը կատարել հատուկ հավաքարարների միջոցով:

5. Բրիզադիրները պիտի հետևեն, վոր կնդուղի մեջից ամբողջությամբ, առանց ամենաչնչին մաս թողնելու, դուրս հանվի հումքը:

6. Թաց բամբակը չպիտի հավաքել խուսափելու համար բամբակի փտումից և բամ-

բակաթելի ու սերմի փչանալուց: Հավաքած
թաց բամբակի հումքը, նախքան պարկերի
մեջ լցնելը, պիտի չորացնել: Թաց հումքը
կարող է ամբողջ պարտիայի փտելուն պատ-
ճառ դառնալ և բացի այդ, բամբակազտիչ
գործարաններում նա գցում է մեքենաների
արտադրողականութունը, վորովհետև թաց
հումքը խճճվում, գունդ է դառնում և ջինի
սղոցներին է վաթաթվում-

7. Թույլ չտալ, վոր միևնույն կույտի մեջ
խառնվի առողջ և հիվանդ հումքը, վորպեսզի
առողջ բամբակաթելը և սերմը չվարակվեն ու
փչանան: Նմանապես չպիտի թույլատրել, վոր
մի պարտիայի մեջ խառնվեն հումքի զանա-
զան բուսաբանական (սելեկցիոն) տեսակները,
քանի վոր տարբեր տեսակների թելերը տեխ-
նիկական հատկությամբ հավասարաբեք չեն,
հետևապես այն բամբակաթելը, վորը յուր
յերկարությամբ ու նրբությամբ կարող է պի-
տանի լինել առանձնակի արժեքավոր դեֆիցի-
տային ապրանքների պատրաստման համար,
կորչում է ցածրորակ տեսակների ընդհանուր
մասոցայում:

Միաժամանակ և հատկությամբ ու տե-
սակով միորինակ բամբակի բերքահավաքը
ժողոված բամբակի քանակի հետ մեկ տեղ պի-
տի դառնա բանվորի հարվածայնության ցու-
ցանիչը և նրան պարզեատրելու չափանիչը:

ՏՈՒՐՄԱՆՆԵՐՈՎ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԴԵՊՓՈՒՄ

Ընթացիկ տարում արդյունաբերությու-
նը դյուղատնտեսությանը տալիս է 1500 պնե-

մատիկ մեքենա: Գործնականում, բերքահա-
վաքի ժամանակ տարբեր մեքենաների ունե-
ցած կորուստները դեռևս հասնում են զգալի
տոկոսների:

Այդ կորուստները հիմնականում արդ-
յունք են հետևյալ հանգամանքների:

1. Ցիլինդրները բավարար չափով նոսր
չեն. բանվորն արագ կերպով է հեռացնում
փուքսի բերանը կնգուղից, վորի պատճառով
վերջինումս մնում է հումքի վորոչ մասը:

2. Բանվորների փոխվելու, անցնելու մի-
ջոցին շլանգներն ու տրակտորները զետին են
թափում հումքն ու յերբեմն ամբողջ կնգուղ-
ները:

3. Առանձին բանվորների ու տրակտո-
րիստների վոչ լավորակ ու ճշտապահ աշխա-
տանքը:

Այդ կորուստները նվազագույն չափով
քչացնելու համար անհրաժեշտ է կիրառել հե-
տևյալ միջոցները.

1. Յուրաքանչյուր տուրմանին ամրացնել
հատուկ մշտական հավաքարարների բրիգա-
դա:

2. Յուրաքանչյուր հավաքարարի ամրաց-
նել վորոչ շլանգի ու վորոչ շարքերի, վորոնց
աշխատանքի վորակի պատասխանատուն կլինի
հենց այդ հավաքարարը:

3. Յուրաքանչյուր տուրմանի մոտ հավա-
քարարների թվի չափով պիտի դրվեն պար-
կեր, վորը միանգամայն կվերացնի տեղի ու-
նեցող ժամանակի կորուստը՝ մեքենաների
կանգ առնելու դեպքում (ինչպես այդ տեղի
ուներ անցյալ տարի):

Պարկեր լինելու դեպքում, յերբ մեքենան կոտրվում կամ ժամանակավոր կանգ է առնում, բոլոր բանվորները պիտի անմիջապես սկսեն ձեռքով հավաքել բամբակն ու շլանգները և տրակտորների թափած հումքն ու կընդուղները:

4. Առանձին բրիգադների ու մեքենաների աշխատանքի վորակի առնչությամբ մեկ կամ մի քանի մեքենայի վրա պիտի նշանակվեն հատուկ հավաքարարներ, բանվորների չհավաքած հումքը և գետին թափված բամբակը ժողովելու համար:

5. Հետևել, վոր տրակտորի անիվները կանոնավոր ընթանան և մարդերի մեջ չնկնեն:

6. Տուրմանը վոչ թե պիտի ընթանա հավաքարարներին համահավասար, այլ նրանց առաջից: Դուրս քաշած շլանգով շարժվելու յե առաջ միայն այն ժամանակ, յերբ բանվորներն էլ առաջ կընան նույնպես դուրս քաշած շլանգներով, այսինքն մեքենան կանցնի արդեն հավաքած հողամասով և այս կերպ տրակտորը զգալի չափով հումք ու կնգուղ պակաս կլթափի:

ՊԱՅՔԱՐ ԿՈՐԹԻՍՏՆԵՐԻ ԴԵՄ ԱԼԵԴԻՆԳՆԵՐՈՎ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԴԵՊՔՈՒՄ:

Ցրտերից հետո կատարելիք բերքահավաքի համար արդեն 1931 թ. լայնորեն դործադրվում են սլեդինգները (սահնակներ), վորոնց վրա դանակավոր ապարատի վոխարեն սմբաջված են սանրիկներ:

Այդ մեքենաների (դեռևս չկատարելադործված) անցյալ տարվա աշխատանքի փոր-

ձից պարզվել է, վոր բավականին խոշոր տոկոսի հումքի փչացում և կորուստներ են յեղել:

1. Վերջին հավաքին դաշտում բացի չբացված կնգուղներից կլինեն վորոշ մասով միանգամայն հասուն կնգուղներ:

Մեքենաներով թե մեկի և թե մյուսի միաժամանկ հավաքելու դեպքում բացված կընգուղների բամբակը խիստ կկեղտոտվի տերևների կտորտանքով և կնգուղների կձեպով, վորոնցից մաքրելը դժվար է լինելու և բացի այդ վորոշ մասով հումքը գետին է թափվելու:

Ուստի սլեդինգները դործի գցելուց առաջ հարկավոր է կանխորեն ձեռքով հավաքել բացված ու կխաբաց կնգուղների հումքը:

2. Դաշտերում յեղած մոլախոտերը խիստ շատացնում են սլեդինգի բերքահավաքի կորուստները. այդ կարգի կորուստները վերացնելու համար անհրաժեշտ է դաշտերից նախապես բոլորովին հեռացնել մոլախոտերը:

3. Սլեդինգները հաճախ դաշտում թողնում են կնգուղների մի մասը, վորոնց սանրերը բռնած չեն լինում: Անհրաժեշտ է խնամքով հետեվել սլեդինգի աշխատանքին և վերացնել այդ կարգի կորուստները:

4. Սլեդինգին հետեվող բանվորները պիտի ունենան գոգնոցներ՝ սլեդինգի քաղած ու կորցրած կամ սանրերի թողած կնգուղները հավաքելու համար:

1008
3430

Պայքար կորուստների դեմ փոխադրութեան
ժամանակ

Հումքը դաշտից տնտեսութիւն, գնման
կայան և ապա բամբակազտիչ գործարան փո-
խադրելու ժամանակ շատ դեպքեր են լինում,
յերբ բամբակի մի մասը կորչում է:

Թեպետ այդ կորուստները յերեմն թր-
վում են շատ չնչին, այնուամենայնիւմ դրանց
դեմ պիտի ամենամեծապէս պայքարը մղել,
վորովհետև ընդհանուր պետական մասշտա-
բով նրանք կազմում են արդեն չափազանց ըզ-
բաւի մեծութիւն, վոր կարող է ազդել մեր
Միութեան տեսութիւն արդիւնաբերութեան
լրիւ բեռնավորման վրա:

Փոխադրութեան ժամանակ տեղի ունե-
ցող բոլոր կարգի կորուստների դեմ կարելի չէ
հեշտութեամբ պայքարել: Դրա համար ան-
հրաժեշտ է ուշադիր մերարեւելի հումքի բեռ-
ներուն և դատարկելուն, ժամանակին տարա-
ների նորոգման, պարկերը կարելուն և կառ-
քերի նորոգման (հումքը բաց տեղափոխելու
համար):

Փոխադրութեան ժամանակ տեղի ունեցող
կորուստները վերագնելու համար պիտի կի-
րառել հետեւյալ կոնկրետ միջոցառումները:

1. Ժամանակին նորոգել այն պարկերը,
վորոնցով պիտի փոխադրուի բամբակը: Պար-
կերի բերանը կարելի ուղիւնայ կերպով, ան-
թույլատրելի համարել պարկերի բերանների
ամրացումը թուկերով ու ճիւղտներ անցկաց-
նելով:

2. Ուղտերով փոխադրելու դեպքում,

վորպէսզի ուղտերը չկրծոտեն պարկերը,
հարկավոր է նրանց գլուխն անցկացնել յերա-
խակալներ:

3. Հումքը սայլերով փոխադրելու դեպ-
քում պետք է հումքն ուղարկել ու ստանալ
սայլապաններից ֆակտուրայով, պատասխա-
նատուութեան յենթարկելով նրանց հումքի
պահասորդի համար:

4. Հումքը պարկերից թափելիս պիտի
խնամքով նայել և թույլ չտալ, վոր նրանց մեջ
մնա թեկուզ բամբակի ամենաչնչին մաս:

5. Պայմանավորուել յերկաթուղու կայա-
րանների հետ, ուր բամբակ է բեռնվում, վոր
բեռնող բանվորների պարտականութեան մեջ
մտցվի ընդունելու և բեռնելու ժամանակ պար-
կերից թափված բամբակի ամենորոյա հավա-
քումը և բեռնվող վագոնում տեղավորելը:

Հումքը յերկաթուղուց ստացող գործա-
րանների պարտականութեան մեջ մտցնել վա-
գոնները դատարկելու ժամանակ, յերբ բամ-
բակն առանց տարայի չէ թափված նրանց
մեջ, մնացորդները հավաքել և առանձին տեղ
դնել:

Պայքար կորուստների դեմ պահելու Գա-
մանակ

Անկանոն ձեւով բամբակի հումքի պահե-
լը կարող է պնտճաւ դառնալ և դառնում է
բամբակի հսկայական կորուստների:

Բամբակն ընդունելիս, տեղավորելիս,
պարկերը լցնելիս և անմիջականորեն գնման
կայաններում ու գործարաններում պահելիս

չատ անփուլթ են վերաբերվում դեպի բամբակը վոչ միայն բանվորները, այլև տեխայերսունալը (ընդունողները) :

Դրա շնորհիվ ցրիվ է գալիս, վոտնատակ է տրվում, կեղտոտվում է, ոգտագործվում է պանազան տնտեսական կարիքների համար՝ թուկի ու ջնջոցի տեղ :

Հաճախ բամբակը պահվում է բաց յերկըն քի տակ, ուղղակի հողի վրա, վորից նա կեղտոտվում է ու փչանում, հատկապես խոնավ յեղանակին :

Այդ կարգի կորուստները վերացնելու համար անհրաժեշտ է հետևյալը .

1. Ընդունողի կշռի մոտ պիտի դնել հատուկ արկղներ, նրանց մեջ հավաքելու և առանձին պահելու համար բեռների իջեցնելու և կշռելու ընթացքում գետին թափված բամբակը :

2. Չթուլատրել, վոր բամբակն ուղղակի գետին դրվի առանց հատուկ տախտակամած պատրաստելու դրա համար :

3. Բամբակի հումքը հարկադրված ծածկոցի (навес) տակ չպահելու դեպքում, բամբակի բարդանները հարկավոր է խնամքով ծածկել բրեզնտներով կամ ծայրահեղ դեպքում պարկերով :

4. Բոլոր ծածկոցները պիտի ունենան ձեղուններ (казырек) հումքն անձրեվների ժամանակ թրջվելուց պաշտպանելու համար :

5. Բամբակը պահելու շենքերը պիտի լինեն բացարձակապես մաքուր և լավ քամհարվող : Պահեստում բամբակն ամեն տեղավորի-

ման ժամանակ պիտի հետեվել, վոր հումքի դարսելու տեղը լինի մաքուր . խուսափել բամբակը տեղից-տեղ շարժելիս շաղ տալուց : Վճռական կերպով արգելել վոտնամանով բամբակի միջով անցուղարձը, առանձնապես խոնավ բամբակի, վորից կեղտոտվում և ցիր ու ցան է լինում բամբակը :

6. Յերբ նկատվում է, վոր տաքանում է բամբակը, վերջինս պիտի քամուն տալ, ավելորդ խոնավությունից ազատելու համար, վորի բամբակը տաքանում է ու փչանում :

7. Վոչ մի դեպքում չպիտի տարբեր սելեկցիոն տեսակի, տարբեր վորակի, նաև թաց ու նորմալ չորության բամբակների միատեղ պահելը :

8. Առանձին ուշադրություն պիտի դարձնել կոլտնտեսություններում բամբակը ժամանակավոր պահելու ռացիոնալացման վրա, ուր կորուստները հասնում են առանձին բարձր տոկոսների վերը թված կանոնները հաշվի չառնելու հետեվանքով :

9. Բամբակը պահելու բոլոր տեղերում խիստ կերպով պիտի պահպանվեն հակահրդեհային ձեռնարկումների կանոնները :

Պայքար կորուստների դեմ գործարաններում .

Գործարաններում կորուստները գոյանում են պահելու ժամանակ, հումքի տեղից-տեղ շարժվելուց (վոչ պնեմատիկ մատուցման դեպքում) և արտադրության մեջ :

Այդ կարգի կորուստները վերացնելու համար անհրաժեշտ է պահելու ժամանակ կի-

րառել վերը նկարագրած սլաքարի և գործարանային տնտեսութեան առանձին պայմաններէց բղխող կանոնները:

1. Այն գործարանները, վորոնք չունեն հումքը պահեստներից գործարանի կամերաները փոխադրելու պնևմատիկ տրանսպորտ, պիտի կազմակերպեն թափված բամբակի խնամքով հավաքը և հատուկ բանվոր վերակացու կարգեն, վորին և պատասխանատու դարձնեն այդ կարգի կորուստների լիակատար վերացման համար:

2. Հումքի կամերաների մուտքը պիտի չինված լինի թեք, ծածկոցի ձևով, գերադասելի յե, վոր լինի ցանցապատ, վորպէսզի մատուցողները վտանամանների կեղտը չթափվի բամբակի մեջ:

3. Պահեստի բամբակի տականքը և բոլոր գտիչների ու սեպարատորների թափթփածը հարկավոր և տեսակավորել, զատելով պիտանի հումքը:

4. Խցկումների ժամանակ ամեն տեսակի առանձնացրած նյութը ցրել չտալ, այլ հավաքել և կրկին գործի դնել:

5. Առանձին հավաքել ու պահել թերակոշտերը (У П Ю К) նախապէս մաքրելով կողմնակի խառնուրդներից:

6. Փոշոտ կամերաներում շենքերի տանիքների վրա փոշու հետ մեկտեղ նստում են նաև բամբակի աղվամազը, վորը դուրս ե նետվում վենտիլատորներով կոնդեսորներից և սեպարատորներից: Այդ աղվամազը մաքրելով փոշուց կարող ե գործադրվել վորպէս

նյութ ցելյուլոզ և այլ պրոդուկտներ պատրաստելու համար:

7. Մամլելու բաժնում բամբակաթելի բոլոր կտորտանքները հարկավոր և հավաքել և առանձին պահել, թույլ չտալ, վոր ցրել տրվի բոլոր տեսակի մաքրումների և պարտիաների փոխվելու դեպքում:

8. Թելհանից յեւած բամբակաթելի ծայրերը և պինդ վորտքները հարկավոր և հավաքել և այլ պակասավոր բամբակաթելերի հետ պահել առանձին:

9. Բամբակազտման ժամանակ հետեւել սերմի փետրավորութեան աստիճանին, թույլ չտալ, վոր սերմի վրա մնա բամբակաթել, իսկ լինտերովկա անելիս (линтеровка) թույլ չտալ, վոր սերմերը դուրս գան մազեծածկ վորոնք նվազեցնում են լինտեր ստանալը:

Խ. Ս. Հ. Մ. Ժողկոմխորի և Համ. կ(բ)կ կ. վորոշումը 1932 թ. բերքահավաքի կամպագիայի մասին.

Կոլտնտեսութեանների և խորհտնտեսութեանների լիակատար հաղթանակը գյուղատնտեսութեան մեջ, վորոնք ընթացիկ տարվա ցանքի կամպանիայի վերջում ընդգրկել են գարնանացանի վողջ տարածութեան $\frac{4}{5}$ մասը, վկայում ե, վոր ԽՍՀՄ-ը վերջնականորեն հաստատվել և նոր, սոցիալիստական ճանապարհի վրա: Դրանով ել վերջնականապէս ջախջախվեց և հողս ցնդեց բուրժուական այն

տեսությունը, ԽՍՀՄ-ի դեպ կապիտալիզմ վերադառնալու մասին:

Կոլտնտեսությունների կուտակած փորձը, կոլտնտեսությունների աճումը, կոլտնտեսությունների դարնանացանի ավելի քան կես մասի ընդգրկումը մեքենա-տրակտորային կայանների կողմից, խորհրտնտեսությունների ամրացումը, կոլտնտեսական առևտրի ծավալումը, դրանք բոլորը հնարավորություն են ստեղծում այս տարի զգալի չափով բարելավել բերքահավաքը, վորը հանդիսանում է գյուղատնտեսական աշխատանքների ամենադժվարին, պատասխանատու մասը:

ԽՍՀՄ-ի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և կուտակցության կենտրոնական Կոմիտեն առաջարկում են խորհրդային և կուտակց. կազմակերպություններին ավելի քան ցանքի կամպանիայի ժամանկ, կենտրոնացնել իրենց ուժերը բերքահավաքի աշխատանքների կատարման վրա, վորոնք վորոշում են ամբողջ գյուղատնտեսական տարվա արդյունքները և այդ առնչությամբ իրապես ուժեղացնել իրենց ուշադրությունը գյուղատնտեսության հարցերի նկատմամբ:

Առաջիկա բերքահավաքի կամպանիային անհրաժեշտ է կենտրոնացնել մեր ուժերը բերքահավաքի նախորդ կամպանիաների հիմնական թերուրյունների վերացման վրա, այն է՝ վերացնել հացահատիկի, ճակնդեղի և տեխնիկական այլ մշակույթների խոշոր կորուստները, բերքահավաքի ձգձգումը, տրակտորային և ձիու պարկի վատ կազակերպվածու-

թյունը, աշխատանքի անբավարար կազմակերպությունը բերքահավաքի այսպես կոչված «կոնվեյերական» մեթոդի գործադրման ասպարիզում, հնձված հացի դիզումից հրաժարվելը: Ժողկոմխորհը և կենտկոմը հատուկ ուշադրություն են դարձնում հացարույտների բերքահավաքի հետ միասին նաև շաքարի ճակնդեղի, բամբակի, արևածաղկի, ծխախոտի, կարտոֆիլի, վուշի, կանեփի բերքահավաքի վրա և պահանջում են թույլ չտալ անցյալ տարվա սխալները, վոր տեղի ունեցան շաքարի ճակնդեղը փորելու և փոխադրելու գործում:

Այն կարեվորագույն խնդիրները, վորոնց լուծման վրա պետք է կենտրոնացնեն իրենց ուշադրությունը խորհրդային ու կուտակցական կազմակերպությունները՝ Ժողկոմխորհը և կենտկոմը համարում են հետևյալները. —

1. Բերքահավաքի ամբողջ աշխատանքի անկյունաքարը պետք է կազմի մեր պայքարը կորուստների դեմ: Կորուստների դեմ պայքարելու վճռական միջոցներն են՝ կատարել բերքահավաքը վորքան կարելի յե կարճ ժամկետներում, ըստ ամենայնի ոգտագործելով վոչ միայն բարդ, այլ և ամենահասարակ մեքենաներն ու գործիքները, անհապաղ և անպայման ամենուրեք կիրառելով հնձված ամբողջ հացի դիզումը, և նրա ամենաարագ կալսումը: Միաժամանակ անհրաժեշտ է համապատասխան միջոցներ ձեռք առնել՝ բերքը գողությունից պահպանելու համար, խնամքով կատարել կալսումը, ամենախիստ հաշվառման յենթարկել բերքը, կազմակերպել

հասկերի հավաքումը, կիրառել հատիկահավաքներ և այլն:

2. Կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպումը պետք է ավելի մեծ չափով ապահովի յուրաքանչյուր բրիգադայի և առանձին կոլտնտեսականի անմիջական շահագրգռվածությունն իր աշխատանքի արդյունքով: Դրա համաձայն, պետք է ապահովվի գործավարձի բրիգադային ու խմբակային մեթոդների կիրառումն ամենուրեք, բոլոր կոլտնտեսություններում, վորպեսզի նայած բրիգադի աշխատանքի վորակին, կորուստների չափին, հացահատիկների ու տեխնիկական մշակութային բերքահավաքին, կարժաման ու փոխադրման ժամկետներին կոլտնտավարչությունը 10-20 տոկոսի սահմաններում ավելացնի կամ նվազեցնի բրիգադի ու բրիգադիլրի աշխորի արժեքի գնահատումը կամ ստացած աշխորերի թիվը:

3. Կոլտնտեսություններում յեկամուտները՝ մթերքով թե փողով, պետք է տրվեն յուրաքանչյուր կոլտնտեսականի ստացած աշխորերի ճիշտ թիվի համաձայն: Կերը բաշխելիս, պետք է հաշվի առնել կոլտնտեսականների անասունների թիվը, վորպեսզի կեր չստացող կամ պակաս ստացող կոլտնտեսականները դրա փոխարեն ստանան այլ մթերք, առանց դուրս գալու այն շրջանակից, վորի սահմաններում տվյալ կոլտնտեսության մթերք է տրվում աշխորի համար:

Այդ առնչությամբ, անհրաժեշտ է վերացնել անցյալ տարի տեղի ունեցած այն պրակ-

տիկան, յերբ գյուղատնտեսական արտադրության մեջ աշխատող և վորոշ թիվից ավելի աշխոր ունեցող կոլտնտեսականներին յեկամուտի նյութական մասը տրվում էր սահմանափակ չափով, վորպեսզի այդպիսով լավագույն կոլտնտեսականն ավելի մեծ չափով յեկամուտ ստանա թե փողով և թե մթերքով:

4. Անհրաժեշտ է դեռ ևս կալի ժամանակ ավանս տալ կոլտնտեսականներին՝ ի հաշիվ յեկամտի մթերային մասի, փաստորեն կալված հացի 10—15 տոկոսի չափով, վորպեսզի ավանսների ինչպես և ամբողջ յեկամտի բաշխումը կատարվի բացառապես ըստ աշխորերի: Պետական մթերումների պլանի համաձայն հացահատիկների հանձնումը վերջացնելուց, սերմացվի ֆոնդն առանձնացնելուց հետո, առանց վորեվե ձգձման կոլտնտավարչությունը պետք է տա կոլտնտեսականներին նրանց հասանելիք պարենի և կերի հացահատիկի մնացած մասը: Այդ առնչությամբ անհրաժեշտ է թույլ տալ, վոր համաձայն մի շարք կոլտնտեսությունների և շրջանների փորձի (Հյուսիսային Կովկաս և այլն), այն կոլտնտեսություններում, վորտեղ կոլտնտեսությունն ինքն անհրաժեշտ է համարում, ի հաշիվ կոլտնտեսականների միջև բաշխելիք յեկամտի մթերային մասի, տալ կոլտնտեսականներին դրամական ավանս 15—20 տոկոսի սահմաններում:

5. Անհրաժեշտ է վերացնել յեկամտի փողային մասի վնարման հետաձգումը՝ կոլտնտեսականներին մինչև յեկամուտների վերջ-

նական բաշխումը և ստեղծել այնպիսի գրություն, վոր կոլտնտեսությունն իր հանձնած (վաճառած) մթերքի համար ստացած փողի հիմնական մասը տա կոլտնտեսականներին ավանսի կարգով, ըստ նրանց ունեցած աշխորերի:

6. Ժողկոմխորհը և կենտկոմն անթույլատրելի յեն համարում, վոր այս տարի ևս կըրկնվեն անցյալ տարվա պրակտիկայում տեղի ունեցած այն փաստերը, յերբ տնտեսություններում հավասարեցուցիչ մոտեցում եր ցուցաբերվել աշխորի համար տրվելիք մթերքների չափը վորոշելու գործին, վորով անկախ կոլտնտեսականների աշխատանքի վորակից ու արդյունքից, զանազան կոլտնտեսություններ հավասարաչափ հաց եյին տալիս կոլտնտեսականներին աշխորերի համար: Բերքահավաքը և հացամթերումները կիրառելիս, կոլտնտեսություններում յեկամուտը բաշխելիս, անհրաժեշտ է ստեղծել այնպիսի գրություն, վոր այն կոլտնտեսությունները, վորոնք ավելի լավ են ցանել և հավաքել բերքը, կանոնավոր կերպով են կատարել նրանց համար սահմանված պետական մթերման պլանները, համապատասխանորեն սեփական գործածության համար ավելի հաց ունենան իրենց տրամադրության տակ:

7. Խորհանտեսությունների և կոլտնտեսությունների տեխնիկական գինվածությունն ուժեղացնելու նպատակով ներկա բերքահավաքի կամպանիայում անհապաղ բաց թողնել խորհանտեսություններին և կոլտնտեսու-

թյուններին 16.190 տրակտոր, 6.700 ավտոմոբիլ և 170 միլիոն ռուբլու բերքահավաքի մեքենա, վորից 8.500 կոմբայն, 40 միլիոն ռուբլու տրակտորի պահեստի մասեր, 12 հազար տոնն տեսակավոր յերկաթ՝ տրակտոր նորոգելու համար, 12 հազար տոնն անիվի յերկաթ: Տեղական խորհրդային և կուսակցական որգանները պետք է հատուկ ուշադրություն նվիրեն տրակտորային պարկի, մեքենաների ու սայլերի նորոգմանը և ձիերի նախապատրաստմանը բերքահավաքի համար: Պետք է ապահովել ամբողջ տրակտորային պարկի աշխատանքի և բերքահավաքի մեքենաների իրական բարելավումը և նրանց փչացումների վերացումը: Նկատի ունենալով պահեստի մասերի սուբ պակասը, նկատի ունենալով, վոր հնարավոր չէ կենտրոնացված կարգով պատրաստել բոլոր անհրաժեշտ մասերը, պետք է մորիլիդացիայի յենթարկել տեղական բոլոր ռեսուրսները տրակտորի պահեստի մասեր պատրաստելու համար:

8. Տեղական խորհրդային և կուսակցական որգանները, առանց խառնվելու խորհտնտեսություններին և կոլտնտեսություններին կից մեքենատրակտորային կայանների ոպերատիվ ընթացիկ աշխատանքին, միևնույն ժամանակ պետք է ամենորյա իրական ոժանդակություն ցույց տան խորհանտեսությունների և մեքենատրակտորային կայանների գիրեկտորներին, վերահսկեն նրանց աշխատանքին, նկատի ունենալով, վոր բերքահավաքի ընթացքի համար, աշնան գյուղատնտեսական

աշխատանքների, վորպես գյուղատնտեսական-
քաղաքական հիմնական կամպանիայի աշխու-
տանքների, կիրառման համար, խորհունտե-
սությունների ու մեքենատրակտորային կա-
յանների գիրեկտորների հետ միասին պատաս-
խանատու յեն նաև տեղական խորհրդային և
կուսակցական որգանները:

9. ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհը և Կենտկոմը
ավտոտրակտորային գործարանների, գյուղա-
տնտեսական մեքենաչինության գործարան-
ների և տրակտորի պահեստի մասեր արտա-
դրող գործարանների հատուկ ուշադրությու-
նըն են հրավիրում այն հանգամանքի վրա,
վոր բերքահավաքի կամպանիայի հաջողու-
թյունը զգալի չափով կախված է նրանց աշ-
խատանքից և առաջարկում են նրանց ապա-
հովել ծրագրի լիակատար կենսագործումը:

10. Բերքահավաքի հաջող կատարումը
կախված է բերքահավաքի աշխատանքների
նախապատրաստումից և կազմակերպված ու-
թյան աստիճանից: Ժողկոմխորհը և Կենտկո-
մըն առաջարկում են ԽՍՀՄ-ի Հողժողկոմա-
տին հենվելով կոլտնտեսությունների կուտա-
կած փորձի վրա, ՄՏԿ-ների և խորհունտեսու-
թյունների, ավելի մեծացած դերի վրա, ոպե-
րատիվ ղեկավարություն սահմանել բերրա-
հավաքի կամպանիայի կիրառման ասպարի-
զում՝ ըստ շրջանների և առանձին մշակույթ-
ների, այնպես, ինչպես տեղի ունեցավ ցանքի
կամպանիայի ժամանակ, մասնավորապես
ըստ շրջանների և ըստ մշակույթների տվյալ-
ներ հրապարակելով բերքահավաքի, դիզման

և արտադրանքի փոխադրման, ինչպես և աշ-
նանացանի ու աշնանավարի ընթացքի մասին:

ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհի նախագահ՝
Վ. ՄՈԼՈՏՈՎ (ՍԿՐՅՍ.ԲԻՆ)

ՀամԿ(բ)Կ-ի Կենտկոմի քարտուղար՝
Ի. ՍՏԱԼԻՆ

«Ազգային գրադարան



NL0209546

16828